Գ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՄԱՅԻՍ 1 1893 ԹԻՒ 8

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M. D. 202 W. 23d St. New York Խմբագիր, Տր. Մ. Ս. Գաբրիէլ Լեան

«Հայք»ի ներկայ թուոյ խմբագրականք տրտասովոր խոտութիւն մ'ունին, ինչպէս մեք իսկ կը զգամք զայնս մամլոյ տակ դնելէ առաջ վերջին անգամ մ'ալ կարդալով։

Խոտութիւնն այս թերթի վաղածանօթ մէկ յատկութիւնն է։ Բայց կը յուսամք թէ թերթին այդ խոտութեան սիրաշունչ բնութիւնն ալ վաղածանօթ եղած լինի։

Քաւ ի մէնջ ուրանալ գործիչներու աշխատութիւնն և ժողովրդեան զոհողութիւններն, երիտասարդաց եռանդն և ամենուն արթնութիւնն. սակայն և այնպէս մեր հայրենի դատին անհուն մեծութեան և ահռելի դժուարութեան առջեւ այդ ամենն կը թուին դեռ յոյժ անբաւական և յոյժ անզօր։ Մեր բաղձանքն է մղել հայ ժողովուրդն ու գործիչներն աւելի կանոնաւոր և աւելի հզօր քայլեր առնլու, և զայդ չէ հնար ընել առանց քննադատելու ներկայ գործողութեանց թերութիւններն։

* *
*

Մեր Ամերիկայի հայրենակիցք ալ յուսամք պիտի հասկանան թէ իրենց ինչ ինչ անկարգութեանց և թշուառութեանց վերայ կը խօսիմք ոչ թէ վէրքերն արեւուն ցուցնելու հաճոյքն զգալով այլ զայնս բուժելու հնարն խնդրելու և միջոցներն նշակելու մտօք։ Զարիք մի կայ զոր եթէ ծածկել ուզէինք իսկ, չպիտի կարենայինք։ Եւ ինչո՞ւ օտար թերթերն, անգլիական թերթերն Ուսթերի, հրատարակեն այդ ցաւալի եղելութիւններն մեր մասին, և մեք անգէտ մնամք իրարու վիճակին։

Մեր անցեալ աւուր այցն ի Ֆիլատելֆիա և մանաւանդ յՈւսթերը համոզեց զմեզ թէ մեր գաղթականութեանց միամիտ և բարի զանգուածին մէջ թունաւոր և մոլորցուցնող անհատներ մուտ գտած են և բաւական ազդուապէս գէշ օրինակ եղած են շատերու. պէտք է շուտով միջոցներ գտնել կորստաբեր նորամուտ սովորութիւններն արմատախիլ ընելու մինչ շատ խորուրցած չեն։

Այդ մասին պիտի խօսիմք յառաջիկայ թուով։

Միխիթարական է այժմէն նշանակել թէ Ուսթերի պառակտեալ ազգայինք որք ուրիշ կերպով չկրցին միանալ, երկրաչարժէ հարուածեալ Մալաթիայի թշուառ հայրենակցաց օգնութեան ձեռք կարկառելու համար միաբան գործելու վերայ են։

* *
*

Գրոչարութեան արհեստն ուսանելու փափաքող հայ պատանի կամ երիտասարդ մի կուզուի։ փափաքողն հաճի դիմել «Հայքի» խմբագրատունն։

ՀԱՅՔ

HAÏK

Entered as second-class mail matter at P. O., New York, N. Y.

Address Հասցէ
Editor of "Haïk," 202 West 23 St. New York U. S. America.
կամ Redaction de la Revue "Haïk," ևն։

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատարակուի ամիսն երկու անգամ։

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար երկու տոլար կամ 10 Ֆրանք Կանխիկ

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային քաղաքականութիւն։ — Նամակ Կ. Պոլսէ — Ուսթերի հայոց վերջին դէպքերն. — Ամերիկայի հայոց թշուառ վիճակն — Ազգային և զանազան լուրեր.—

Կը խնդրեմք որ մընի օրտերի կամ մանտա տը փոսթի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցուներլու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ Փողոց

Պրոտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր։

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա.

Հայ ժողովուրդն, հազիւ սթափած դարաւոր նուաղումէն, իւր պչուցեալ աչաց առջեւ տնկուած գտաւ ահաւորն այն հարց — զո՞լ թէ ոչ զոլ։ Հարստահարութեան հին խնդրոյն վերայ, որպէս ըսաւ Ներսէս Պատրիարք, աւելցած է «մեծ քան զայն խնդիր, աղգին գոյութեան ու չգոյութեան խնդիրն։»

Դարերէ ի վեր անլոյծ մնացած խնդիր մ'էր հարստահարութեան խնդիրն, և ահա պատմութեան ընթացքն ուրիշ կերպարան կուտայ այնմ, աւելի ծանր և կրեւոր կերպարան։ Դարն կը հարցնէ մեզ՝ ո՛չ թէ կ'ուզե՞մք արդեօք չհարստահարուիլ, այլ թէ կ'ուզե՞մք վերստին ազգ լինիլ, ոչ թէ կարո՞ղ եմք արդեօք հարստահարողաց դէմ պաշտպանուելու, այլ թէ կարո՞ղ եմք մեք զմեզ պաշտպանել, մեք զմեզ կանդնել և վերածնիլ իբրեւ ազգ։

Այսպէս պատմութիւնն մեր առջեւ կը դնէ այն հարց զոր ուրիշ աւելի պատրաստ ժողովրդոց առջև դրած է այս դարուս մէջ—Իտալիոյ, Գերմանիոյ, Յունաստանի, Սերպիոյ. Պուլկարիոյ առջև— լինիլ ազգ, կազմակերպուիլ իբրեւ առանձին պետութիւն, կամ թէ խառնուելով ծծուիլ անոնց մէջ որք կարող են կազմակերպուիլ։ Պատմութիւնն մեզ կառաջարկէ ոչ թէ հայերն, հայ անհատներն, հայ գաւառներն հարստահարութենէ փրկել, այլ Հայաստան մի վերաստեղծել։ Կ'ըմբռնե՞մք հարցին բնութիւնն. պատրա՞ստ եմք պատասխանելու։ Հարցն յաւիտեան չպիտի մնայ սեղանին վերայ. եթէ կարող եմք ընդունիլ և լուծել զայն փութով, լա՛ւ, եթէ ոչ Պատմութիւնն պիտի լուծէ զայն այլապէս։

Այդ է Եւրոպեան քաղաքականութեան այժմու հոսանաց բնութիւնն։ Պետութիւնք գիտեն զայն, մանաւանդ թէ կը զգան։ Եթէ մեք չեմք գիտեր կամ զգար և թիւր ուղղութեան կը հետևիմք, վա՛յ մեզ։ Դաշնագրերն չպիտի փրկեն զմեզ, ոչ

Պէռլինեանն և ոչ Կիպրոսեանն. դաքա առիթներ միայն են, գործիներ, յորոց հնար է օգուտ քաղել։ Բայց պէտք է միանգամ ընդ միշտ ըմբռնել զայն՝ թէ Եւրոպեան այս կամ այն պետութիւնն կամ բոլորք ի միասին, չեն կրնար 61դ յօդուածն ի գործ դնել— չեն կրնար հայկական գաւառներն Թրքաց ձեռքին տակ բարեկարգել։ Զայդ գիտեն նոքա, մեք վայրապար կը մռմրամք և կը բողոքեմք։ Անգլիա կամ այլ տէրութիւն կարող չէ Դրան իշխանութեան ներքև գտնուող երկիր մի բարեկարգել. ցարդ ոևէ ուրիշ օսմանեան գաւառ այդ կերպիւ բարեկարգուած չէ։ Օսմանեան պետութեան անբարեկարգ մասերն ցարդ երկու կերպիւ կրցած են խաղաղիլ, կա՛մ առանձին պետութիւն կազմակերպուելով —ինչպէս Պուլկարիա— կա՛մ ուրիշ պետութեան մի կցուելով, ինչպէս Հէրսէք-Պոսնիա և հիւսիսային Հայաստան և նոյն ինքն Եգիպտոս, ուր Սուլթանին գերիշխանութիւնն կայ անուանական, իսկ բուն իշխանութիւնն անգլիական վարչութեան ներքև է գործնականօրէն։

Գիտնամք ուրեմն թէ ի՛նչ կը պահանջեմք կամ ի՛նչ կրնամք պահանջել Եւրոպայէն։ Հարստահարութենէ ազատիլ, բարեկարգութիւններ վայելել ընդ Թրքական իշխանութեամբ՝ անգործնական է, և Եւրոպա որքան ալ պնդէ ու պահանջէ Բ. Դռնէն գործադրել իւր դաշնագրական յանձնառութիւններ ի Հայաստան, օգուտ չպիտի լինի։ Եւրոպա երկու բանին մին կրնայ ընել, կա՛մ թոյլ տալ որ մեր հարստահարեալ գաւառք կցուին Ռուսիոյ, կա՛մ թոյլ տալ որ Հայաստան ինքն իրեն համար թափէ ազատութեան ճիգեր և ի պատեհ ժամուն օգնել։

«Հայկական Խնդիր»ն ուրեմն լոկ հացի, հանգստութեան, կենաց և ընչից և պատուոյ ապահովութեան խնդիր չէ, որպէս յաճախ կ'ըսուի։ Այդ ամենն է, և աւելի՛ն ալ։ Հայկական Խնդիրն Հայ Ազգի գոյութեան և չգոյութեան, Հայաստանի վերածնման կամ վերջնական կորստեան խնդիրն է։

Ահագի՛ն խնդիր, հայ ցեղին բոլոր ուժերուն և ամենայն հնարաւոր ճգանց կոչում ընող խնդիր։

Հայոց ներկայ սերունդն, մասնաւորապէս երիտասարդութիւնն, պարտի դողալ ուրեմն մտածելով թէ ի՛նչ ահռելի պատասխանատուութիւն ստանձնած է։ Երիտասարդ առաջնորդք և երիտասարդ հետեւողք են որք հայ ազգութեան մահու և կենաց մարտն մղել յանձն առած են։ Ներսէս Պատրիարք ինքն ևս երիտասարդ էր։

Թէ հայ ժողովուրդն ունի՞ կենսական այն պայմաններ, այն ուժեր և այն կազմական հանգամանք որք հարկաւոր են ճգնաժամն ապահովապէս անցուցանելու, զայդ ապագայն պիտի ցուցնէ։ Մի բան այժմէն յայտնի և ստոյգ է թէ մեր ցեղ աւելի երկար դարեր ճնշուած և աւելի կազմական խեղաթիւրմանց ենթարկուած լինելով՝ երկունքն աւելի դժուար պիտի լինի քան զայլոցն և ճարտարագոյն մանկաբարձութեան կարօտ է ապահով վերածնելու համար։ Բարբարոս, կոչտ, մինչև իսկ աւազակաբարոյ լեռնցիներ աւելի յաջողապէս կը կրեն երկունքն քան մեղ նման ժողովուրդն որոյ ողնայար ծռած է անընդհատ ճնշման ներքև և քաղաքաց մոլեկան նրբամտութեան, ստրկային երկչոտութեան և ծգուած հաչուողութեան վարժուած է։

Այս արտակարգ դժուարութիւններ ծանօթ լինելով, յոյժ ողբալի բան է որ մեր ճգանց գերագոյն ներշնչող և ընդհանուր վարիչ մի կը պակսի Ներսիսի մահուանէն, և Խրիմեան Հայրիկի ևս աքսորումէն հետէ։ Ո՞վ է Ներսիսի գործն շարունակող պատրիարք.— Աչըգեան, ա՛յն Աչըգեան, որ պաշտօն ունէր ժողովրդեան խնդրոց թարգման լինիլ, և սակայն պաշտօն յանձն առաւ նորա արդար բողոքոց ձայնն լռեցուցանել.— որ պաշտօն ունէր ժողովրդեան իրաւունքներն պաշտպանելու, և սակայն իւր իսկ պատրիարքական իրաւասութիւններն չկրցաւ պահպանել։ Պատրիարք մի, որոյ խոհե՛մ թուլութեան անպայման տարածականութեան մէջ Դուռն ամփոփեց և լուծեց Ազգային ժողով և Սահմանադրութիւն, Նախ զՊատրիարքն դնելով այդ ամենու տեղ, յետոյ զՊատրիարքն դնելով հասարակ աւագերիցու տեղ, և վերջապէս բոլոր աւագերէցներն կացուցանելով մանրակերտ և խղճալի պատրիարքի տեղ։ Հաւասարութի՛ւն ի ստորնութեան, ընդհանրական տափակութի՛ւն բռնապետի անդիմադրեալ հարուածոց ներքեւ...։

Իսկ արտասահմանի ազատ ասպարի-

զի՞ն վերայ ինչ կ'ընեն մեր առաջնորդք։ Նոքա զինեալ կը մարտնչին իրարու դէմ, և այր կ'աշխատի վտարել զընկերն յասպարիզէ. մին բաւական տենդոտ և յարատեւ գործունէութիւն կը ցուցնէ միւսին անուն բծելու և գործ խծբծելու։ Կէսք գործունէութեան անցեալ տարիներու յիշատակաւ փառատենչիկ, կէսք անծանօթ անցելոյ և անանուն ներկայի հրապուրիչ և նեմատեսիլ մշուշի մէջէն պատգամատու, ամենն ալ ունին թերթ ի ձեռին, միոյն՝ հանգոյն պղտոր և տղմուտ գետակի՝ անթափանցելի է յատակն, միւսոյն՝ իբրեւ նորագունին փայլուն հայեցողութեանց շուրջ կը դառնայ հրապուրեալ թեթռանց բազմութիւն։

Կա՛նգ առէք, երիտասարդներ, վայրիկ մի խորհինք, կշռենք մեր ուժեր, կշռենք նաև գործոյն լեռնահանդոյն ծանրութիւնն։ Մեր այս բոլոր եռանդ, խօսք, թերթ, հանդէսներ և նուէրներ կրնային շատ բան համարուիլ հասարակ ժամանակց համար, բայց գոյութեան այս ճգնաժամուն մէջ այդ ամենայն դոյզն, աննշան են, գրեթէ տղայական։ Ինչ որ սքանչելի, ծայրայեղ, արմատական է, կը հրապուրէ զմեզ, զի երիտասարդ եմք, սակայն ժամանակ է որ լրջօրէն մտածեմք թէ ինչպէս կարելի է փրկել ազգն ու հայրենիք։

Օ՜, երի՛տասարդներ, երիտասարդնե՛ր, սարսափելի բան և յաւիտենական ամօթ պիտի լինի մեր ցեղին եթէ մեր թեթեւութեամբք, մեր սխալներով, մեր թիւր քաղաքականութեամբ, մեր եսամոլ ախտաւորութեամբ վիժեցուցնեմք երկունքն և կորուսանեմք վերածնութեան այն վերջին ու անգին պատեհութիւն զոր դարն կ'ընծայէ մեզ։

Եթէ չեմք կարող ստեղծել յանկարծ գերազանց վարիչ մի հանգոյն Ներսիսի, պարտաւոր չե՞մք ստեղծել գերագոյն մարմին մի որոյ անդամք ազգային ինքնաճանաչութեան արտայայտութիւններ լինելով՝ միութեամբ ստանան պատկառելի հեղինակութիւն և հանդիսանան առաջնորդող վարչութիւն։

Առաջնորդող վարչութիւնն պարտի որոշ քաղաքականութեան մի համաձայն ուղղութիւն տալ ճգանց։ Ազգային քաղաքականութեան լաւագոյն գիծն մէկ միայն է և ոչ երկու. պէտք է գտնել զայն և անոր ուղղութեամբ հոսեցունել ուժերը։ Բայց ո՞րքան դժուար գործ է որոշել այդ գիծ։ Բազում երիտասարդներ կը թուին դաղափար իսկ չունենալ այդ դժուարութեանց մասին։ Շատեր կը կարծեն թէ արդէն այդ պարզ է և որոշ։ Մեք փորձեցինք գործիչներու ազգային քաղաքականութիւնն գտնել, յոմանց խնդրեցինք գրել անձամբ, և ոչ ինչ որոշ և լի կարացինք ձեռք բերել։ Ազատական թերթք առատ չատախօսութեամբ լի են, բայց հիմնական այս խնդիրէ ձեռնպահ կը մնան, և որոնք որ կը մատչին, յոյժ երկչոտ և վարանոտ ձեռօք կը մատչին խնդրոյն։ Մեք կը կարծեմք թէ այդ լռութեան պատճառն այն է որ խորին համոզում և ճիշդ և ամբողջ քաղաքականութիւն չունին դոքա, և Ձեմք ալ պարմանար։ Հայկական քաղաքականութիւնն յանչափս կնճռուտ և բարդ քաղաքականութիւն մի կրնայ լինիլ միայն, զոր որոշել, ճշդել և ոչ ինքն Ներսէս առանձին ընել յանձն առաւ. նա ունէր իւր կարող խորհրդակիցներ։ Մեր ներկայ գործիչներու ամեն մէկն ալ կարօտ է, ինքն զգայ կամ ոչ, կարօտ է ձեռնհաս խորհրդակցի։ Ճիշդ այդ գլխաւոր պատճառ մ'է որոյ համար խղճամիտ գործիչն պարտի միտիլ ի խորհրդակցութիւն, ի գործակցութիւն և ի միութիւն այլոց հետ։ Սակայն ստիպուած եմք ընդունիլ թէ մեր գործիչք ալ դեռ չեն թուիր լիովին ըմբռնած լինիլ գործոյն ահագին դժուարութիւններն։

Այս բացատրութիւնք, և այն պարագայն ևս թէ չկարացինք գտնել կամ ճշդել տալ հմտագունից քան զմեզ ազգային քաղաքականութեան լաւագոյն գիծն, կարդարացուցնեն մեր ներկայ աշխատութիւն որով կուգամք դնել առաջի Հայ Աշխարհի մեր Ազգային Քաղաքականութեան ուրուագիծ, կամ Ազգ. Քաղաքականութեան վերայ խորհրդածութիւն։

Այն քաղաքականութիւն զոր պիտի փորձեմք ուրուագծել, չէ Ներսիսի քաղաքականութիւնն ճիշդ որպիսի էր 1878 ին, այլ ինչ որ կարծեմք թէ պիտի լինէր այսօր, եթէ ողջ լինէր Ներսէս։ Մեր քաղաքականութիւն Ներսիսեանին տրամաբանական ուղիղ հետեւորդն, նոյնին շարունակութեան երկրորդ վիճակն է։

Ներսիսի քաղաքականութիւնն այն

ժամանակին համար, ռուսընդթուրք պատերազմէն անմիջապէս յետոյ, էր արդարեւ լաւագոյնն որում հնար էր հետեւիլ, և սակայն չյաջողեցաւ։ Փաստն լաւ էր և փաստաբանն ճարտար, բայց դատն կորսուեցաւ։ Չի՞ չյաջողեցաւ մեծ պատրիարքին քաղաքականութիւնն.— վասն զի անզօր էր, — այն ժողովրդի վիճակ՝ որոյ համար յերիւրուած էր այն, կը գործէր զքաղաքականութիւնն անզօր. և դարձեալ՝ սկզբանքն դիւանագիտական այն մարմնոյն որում դիմուեցաւ, կը գործէին զքաղաքականութիւնն անզօր։

Բացատրենք այս երկու կետեր։

Հայ ժողովուրդն անզօր և անբաւական էր Ներսիսի քաղաքականութեան հարկաւոր աղդութիւնն տալու։ Հայք բաւական, և առաւել քան բաւական նեղութիւն, չարչարանք, հարստահարութիւն կրած էին դարերով, և նոյն իսկ վերջին պատերազմին ատեն հաղարաւորք խողխողուած կամ գերի տարուած էին ի ձեռն Քրդաց, բայց բաւական ճգնած չէին ինքնապաշտպանութեան համար։ Առաւել քան բաւական թափուած էր Հայու արիւն, բայց Հայք արիւն թափած չէին։ Պատրիարքն կը փաստաբանէր թէ ժողովուրդն թշուառ է և արժանի կարեկցութեան։ Լա՛ւ, բայց ի՞նչ ըրած էր ժողովուրդն իւր ազատութեան համար.—ոչ ինչ։ Անհուն նեղութիւն կրած էր, այո՛, բայց ազատութեան պայմանն կրել չէ այլ գործել, կրաւորական չէ այլ ներգործական։ Սուր մխած էին թշնամիք, և ինքն ընդունած էր հարուածներն ի կուշտ իւր. չէր դիմադրած, չէր մարտնչած, արիւն չէր թափած զայլոյ։ Այս ամենն կուտային Հայուն խեղճ, ողորմելի, արդահատելի դիմագծութիւն յաչս խիղճ ունեցողին, տրկար և արհամարհելի դիմագծութիւն յաչս այնոցիկ որք գօրութիւն և իրաւունք համանիշ կը համարին, և տկար, կորովազուրկ, երկչոտ դիմագծութիւն յաչս ամենուն։ Պատրիարքն որքան իմաստուն և կորովամիտ ալ որ լինէր, գթութիւն միայն կրնար հայցել այդպիսի ժողովրդի համար, բարուք կառավարութիւն կրնար պահանջել, բայց ճշմարիտն ըսելով, չէր կրնար ինքնօրինութիւն, ազատութիւն պահանջել. տէրն կրնայ ազատութիւն շընորհել ծառայիցն, ծառայն կրնայ գթութիւն և արդարութիւն խնդրել տիրոջմէն, բայց ազատութիւնն չպահանջուիր բանիւ, այլ կ'առնուի բռնութեամբ, կը ստացուի կռուով և կը պահպանուի զօրութեամբ։

Պատրիարքն սակայն համարձակեցաւ ինքնօրինութիւն խնդրել Հայաստանի համար, և տէրութիւնք քաղաքավար, համակիր, գրեթէ հաւանողական պատասխան տուին նմա ոչ պաշտօնապէս, և յետոյ մերժեցին պաշտօնապէս։ Մերժեցին վասն զի պահանջն չափազանց մեծ էր և փաստն ոչ բաւական հիմնեալ, ոչ բաւական հզօր։

Ներսիսի քաղաքականութիւնն անզօր և անբաւական գործող աւելի մեծ պատճառ մ'ալ այն էր որ դիւանագիտական այն մարմին, Պէռլինեան Վեհաժողովն, որում դիմեցին Հայք, չէր կառավարուէր գթութեան և մարդասիրութեան սկզբամբ։

Ինչպէս միշտ, նաև մեր այս լուսաւորեալ կոչուած դարուն մէջ տէրութիւնք իրենց շահ ի վեր կը դասեն քան զմարդասիրութիւն և զարդարութիւն։ Գերմանիա, Ռուսիա, Անգլիա, Ֆռանսա, բոլոր մեծ տէրութիւնք ալ պատրաստ են աւելի խոշոր անիրաւութիւններ գործելու եթէ իրարու արգելք չյարուցանեն շահու տեսակետով։ Պէտք է նաև նկատել թէ մեր լուսաւորեալ այս դարու յոյժ լուսաւորեալ վերջին կիսուն մէջ առաւել քան զսովորականն անարդար են տէրութիւնք։ Պատճառն, համառօտիւ, հետեւեալն է։— Գիտութիւնն նոր մեթոտ մի ընդգրկած է բոլոր ուժով, զփորձառական մեթոտն, որով աքանչելի յառաջդիմութիւն ըրած է։ Այդ մեթոտ, դեռ իւր վերջին եզրակացութիւններ չարտադրած, հիմն եղած է իմաստասիրական դրութեան մի, դրական (positive), բնապաշտ (naturaliste), իրապաշտ (realiste), նիւթապաշտ (materialiste) չփոթ անուններով կոչուած իմաստասիրական մերձաձայն դրութեանց։ Այդ իմաստասիրութիւն, Տարուինի և Հէրպէրդ Սբէնսրի նման բարձրագոյն իմացականութիւններէ ազբերացած՝ ողողեր է ընկերութեան բոլոր դասերն ասաիճանաբար։ Եւրոպայի իմացական մթնոլորտն բաւական վտանգաւոր բաղադրութիւն մ'ունի այժմ, ուր սնանող վերջին սերունդն, գիտուն, քաղաքագէտ, դիւանագէտ, և մինչև իսկ հասարակ գործաւոր, անասնային

կերպ մ'ունին դատելու, և մրցանք վասն գոյութեան կոչուած պայքարին մէջ ուժին կուտան առաջին տեղն, այնպէս որ ո՛վ որ հզօրագոյն է, նա կը յաղթէ, և իրաւունք ունի յաղթելու, կամ թէ ըսենք Vogueի հետ, ոյժն ոչ թէ յառաջ է քան զիրաւունս, այլ ոյժն կը ստեղծէ զիրաւունս · իսկ գութ, մարդասիրութիւն, խիղճ, բարոյական պարտականութիւն յաւէտ խոտելի են իբրև զսպիչ և արգելիչ յաջող մրցման։

Այսպիսի սոսկալի իմաստասիրութիւն ոչ ոք կ'ուզէ հրապարակաւ դաւանիլ, և ոչ իսկ ինքն երկաթեայ նախարարապետն Պիզմարք, նախագահն Պէռլինի Վեւլաժոդովոյն, և սակայն կը գործէր նա և կը գործէին դիւանագէտք և կառավարողք, անիշխանականք և ընկերվարականք, պուռժուազի և գործաւորք՝ այդ իմաստասիրութենէ ներշնչեալ, և իրենց փափաքներ— ոչ թէ արդարութիւն, ո՛չ, պարզամիտք միայն թող հաւատան այդմ— իրենց անյագ բաղձանքներ յագեցուցանելու համար ամենն ալ բիրտ և բուռն ուժի կը դիմեն որքան որ հնար գտնեն։

Եւրոպայի իմացական և բարոյական այդ պայմանք ծանօթ լինելով, բնաւ զարմանալի չէ որ հայ ժողովրդին խնդիրն, իբրեւ տկարի և մրցելու անտրամադիր գտնուող ժողովրդի խնդիր արհամարուեցաւ։ Ներսէս Պատրիարք դեսպաններէ բազում յուսադրիչ և քաղցր խօսքեր լսած էր, և հայ պատուիրակք ալ նոյնքան մեղրածոր և համակրական խօսքերու առատութիւն վայելեցին յԵւրոպա՝ ոչ միայն նշանաւոր անձնաւորութեանց կողմանէ այլև ի շրթանց իսկ լիազօր դեսպանաց եւ հզօր իշխանաց։ բայց սալոններու և առանձին տեսակցութեանց մէջ ցոյց տրուած այդ կեղծ և երբեմն անկեղծ իսկ համակրութիւն բոլորովին աներեւոյթ եղաւ երբ Վեհաժողովի սեղանին վերայ դրուեցաւ Հայոց խնդիրն, որ ոչ մի տէրութեան շահուն կը ծառայէր մասնաւորապէս, և ոչ ոք յօժար էր այս կամ այն հզօր տէրութեան առարկութեանց դէմ պաշտպանել տկար և թշուառ Հայոց իրաւունքն։

(Շարունակելի)

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Կ. Պոլիս 10 Ապրիլ, 1893

Բարեկամ,

Ի՞նչ կ'ուզէիր— որ Սրբազան Աչըգեան հրաժարէ՞ր պատրիարքութենէ։ Եւ չէի՞ր գիտեր որ նա արդէն չատոնց հրաժարած էր պատրիարքական գաւազանէն, արժանապատուութենէն և աղդեցութենէն։ Եւ չգիտե՞ս թէ վերջապէս հրաժարեցաւ նա իւր պատրիարքական պաշտօնի յետին մնացորդէն ալ— բայց յանուն։

Այժմ ամեն աւագերէց փոքր պատրիարք մ'է · այլ եւ պատրիարքի կամ ազգային ներկայացուցչի պէտք չմնաց։ Հանրային կրթութեան Նախարարութիւնն ուղղակի հրահանգ յղելով առ աւագերիցունս՝ նոցա իւրաքանչիւր իւր եկեղեցւոյ թաղային վարժարանին պաշտօնական տընօրէն հռչակած է և ուղղակի Մէարիֆին պատասխանատու։ Աւագերէցներէն ոմանք չուարած դիմեցին պատրիարքարան, անպատրաստ և անկարող լինելով այդպիսի կոչում և պատասխանատուութիւն յանձն առնլու։

Երբ արեգակն մարն մտնէ, անթիւ աստեղք կ'երեւին, որք ամենայն չեն կրնար սակայն արեգակի պաշտօնն կատարել։ Մեր ալ պատրիարքական արևն խաւարած է, աւա՜ղ, և բիւր փոքրիկ պատրիարքներ երեւան կ'ելնեն։

Յունաց Պատրիարքն պատրիարք էր և պատրիարք կը մնայ։ Նա արութեամբ յանձն առաւ բոլոր թաղային և գաւառական յոյն վարժարանաց պատասխանատուութիւնն հանդէպ Դրան։

Խօսքի պարզութեա՛ն վասն զՍրբազան Աչըգեան պիտի կոչեմք այսուհետեւ պատրիարք։

Եւ ի՜նչ նշանաւոր Պատրիարք։

Ցիրաւի նա աւելի նշանաւոր է քան զՅունաց պատրիարքն, զի ունի Իմթիազի ոսկի և արծաթ շքանշաններ, կամ աչըքանշաններ։

Մեր պատրիարք կոչեցեալն յարքունիս հրաւիրուեցաւ Ռամազանին իֆթար ընելու, և օրուան յարմար յարդարուած յատուկ սեղանէն վայելելով գոհացաւ։ Ցետ ընթրեաց, առաջնորդութեամբ երկ-

որդ սենեկապետ Նուրի փաշայի, ներկայացաւ Սուլթանին։ Փատիշահն բարձր գոհունակութիւն յայտնեց նմա որ պատրիարք կոչուելէն առաջ և պատրիարք կոչուելէն ի վեր (երբէք պատրիարքի պաշտօն վարել չկրնալով) առ օսմ. փառապանծ գահն հաւատարիմ (և առ իւր ազգն անհաւատարիմ) գտնուած է, և հրամայեց իւր կայսերական բարեւներն հաղորդել իւր հաւատարիմ հայ հպատակաց (որ շատուոր չեն այժմ։)

Նորին վեհափառութիւն յապացոյց իւր բանից անկեղծութեան՝ իւր ձեռօք Աշըգեան պատրիարքի շնորհեց Իմթիազ պատուանշանի ոսկի և արծաթ շքադրամներն։

Փորը կուշտ, կուրծքն զարդարուն, աչքն արտասուօք և սիրտն գոհութեամբ լի՝ սրբազանն վերադարձաւ յարքունեաց։

Աշըգեան այսպէս վաճառեց ինչ որ իւրն չէր։ Ազգին դարաւոր իրաւունքն, պատրիարքութիւնն փոխանակելով շքանշաններու։

Եթէ սա ունենար հասարակ մահկանացուի մի սիրտն, յանձն չէր առնուր այս կողոպտում, այս մատնութիւն։

Երկչոտութիւնն գմարդ ի վատութիւն կը տանի, և վերջապէս յանխղճութիւն և յանգթութիւն։

Օ՜, Սրբա՜զան Հայր, խանչեարի հարուածներ պէտք է աւելի սիրէիր ի կուրծս քո քան այդպիսի շքադրամներ։

Ի՜նչ փառք է շքանշաններն կրել մի կրծքի վերայ որոյ ներքև մեռած սիրտ մի և մեռած խիղճ մի թաղուած կան։

Օր մի խիղճդ պիտի արթննայ և յայնժամ ուրիշ արտասուք պիտի թափես, այլ յաւիտենականութիւնն ալ հազիւ պիտի բաւէ զղջմանդ։

Ապաշխարէ՛ փութով, Սրբազան Պատրիարք Հայր, և փայլէ՛ հայութեան և հայրապետութեան փառաւորագոյն նշաններով։

Մեծ քան զՍուլթան Համիտ հայ վեհապետք և հայրապետք կը դիտեն զքեզ, ամաչէ՜..., թող դարթնու խիղճդ, արիացի՛ր և հրաժարէ պատրիարքի անունէն կամ պահանջէ պատրիարքի իրաւունքներըն։

Եւ դու, բարե՛կամ, կը տեսնես թէ մեր երկրի մէջ հաւասարութիւնն չարունակ յառաջ կ'երթայ. նշա՜ն քաղաքակրթութեան և զարգացման. մեծերն կը պզտիկնան ու պզտիկներն կը մեծնա՜ն. պատրիարքն աւագերէց կը լինի ու աւագերէցներն պատրիարք։ Կեցցէ՛ հաւասարութիւն, կեցցէ վեհ. Սուլթան Ապտ-իւլ Համիտ Խան։

Եւ հաւասարութեան հետ անաչառութիւն, անկողմնակալութիւն կը տիրէ շնորհիւ վեհ. Սուլթանին. այնպէս որ այժմ. արդար և անիրաւ, հարուստ և աղքատ, աւագ և անաւագ, ազդեցիկ և աննշան Հայեր, կրթեալն և ոչն, ամենայն, մինչեւ իսկ կանայք ալ միևնոյն են յաչս կառավարութեան, և ամենն ալ բանտն երթալու, ծեծուելու, տուգանք վճարելու արտօնութիւն կը վայելեն— աչառութիւն, խստութիւն չկա՛յ այլ ևս մեր երկրի մէջ ... Հայոց համար։

Բարեկամ, ահա նոր ապացոյցներ ըզքեզ համոզելու թէ մեր երկիրն հսկայաքայլ յառաջ կերթայ հ'աւասարութեան և անաչառութեան և անխտրութեան մէջ։

ԱՆԵՐԵՒՈՑԹՆ

ՈՒՍԹԸՐԻ ՀԱՅՈՑ

ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐՆ

Ուսթըրի մէջ տարիներէ ի վեր կարեւոր դեր կատարող անձ մի, որ միանգամայն անգլիերէն լեզուի սուսուցիչ Հայոց, քաղաքին Հայոց ազգային գործոց առաջնորդ, Պոլսոյ հայ թերթերու թղթակից, և վերջապէս գլխաւոր թելադրիչն ու վարիչն այն շարժման որով հայ վարդապետ մի բերել տրուեցաւ Պոլսէն իբրեւ առաջնորդ մասնաւորապէս Ուսթըրի և ընդհանրապէս Ամերիկայի Հայոց, ժամանակ մի հեռացած էր Ուստըրէ և գնացած էր ի Քալիֆորնիա։ Նորա հեռանալուն պատճառն հետեւեալն էր. Ուսթըրի հայ եկեղեցւոյ ի նպաստ հանգանակութեան համար Եւրոպա կը յղուի, և վերադարձին, ըստ ասից պաշտօնէից ոմանց, հաշիւներն բաղձալի յստակութեամբ չեն փայլիր. ապա տակաւ առաջնորդին հետ յարաբերութիւնքն կը ձգտին և օր մի կը գժտին բոլորովին։ Վարդապետ Սարաճեան չէր թուէր դժգոհ լինիլ որ թափ-

հանէլեան, այնքան անհաճոյ լինելէն յետոյ հեռացած էր ասպարէզէն։

Ժամանակ անցնելով՝ վարդապետն իւր առջի ազդեցութենէն զգալի չափով կը կորուսանէ։ Թոփհանէլեան Քալիֆորնիայէն կը վերադառնայ յուսթը, և առանձին ժողով և. ընկերութիւն կազմելու ապարդիւն փորձ մ'ընելէ յետոյ՝ կը միտի դէպ ի Հայր Սարաճեան. և սա, պէտք զգալով նեցուկի, լաւ կը համարի հաշտուիլ այն մարդուն հետ զոր այնքան հարուածեր էր յառաջուն։

Այդ միջոցին եկեղեցւոյ վարի յարկն, ժողովասրահին մէջ, կիրակի երեկոյներն ընդհանուր ժողով տեղի կ'ունենար, այն է «Կաճառ» անուամբ ընկերակցութեան հաւաքումն, որ բովանդակ հայ գաղթականութիւնն կը պարունակէր, առանց եկեղեցական խտրութեան, և անդ կը խօսէին, կը գործէին և կը պաշտօնավարէին լուսաւորչեան և բողոքական Հայեր անխտիր։ Կ'երեւի թէ տեղւոյն բողոքական Հայոց բաղդատաբար փոքր թուոյն մէջ գտնուեր են մի քանիներ որք ընդհանուրի վստահութեան արժանանալով պաշտօնի կոչուած են։ Միանգամայն այդ ժողովներու մէջ Հնչակեան կուսակցութեան համակրողներու ազդեցութիւնն զգալի կը դառնայ։ Այս երկու պարագաներ կերեւի թէ շատ հաճոյք չեն պատճառեր վարդապետին, զի սա կը սկսի կէս օրէն յետոյ ուրիշ ժողով մ'ընել՝ Թոփհանէլեանի հետ աջակցած։ Այսպէս, կիրակի օրն երկու անգամ ընդհանուր ազգային ժողով կ'ունենան Հայերն, նախ կէս օրէն յետոյ, ժամ 3ին, և ապա, ժամ 7էն յետոյ, գիշերն։ Նոր սկսուած ժողովն մեծ ժողովրդականութիւն չունենար՝ սակայն, և գիշերուան հաւաքումն կը լինի եռապատիկ բազմութեամբ և եռանդեամբ։

Ցերեկի ժողովոյն անօրէնք, փայլտալու համար իրենց հաւաքման, յատկապէս կը հրաւիրեն զՏիար Մինասեան, Նիւ Եորքի մեծատունն, խօսիլ իրենց ժողովոյն։ Մինասեան, յընթացս իւր ատենախօսութեան, կը թելադրէ որ ամերիկեան Հայոց համահայկական ժողով մի լինի, ուր ամեն գաղթականութենէ ներկայացուցիչք խօսին և միջոցներ նշանակեն Ամերիկայի Հայոց վիճակն բարւոքելու մասին։ Պոսթըն կ'երթայ ապա Մինասեան, և վերադառնալով Նորէն յուսար, կը բաղձայ որ առաջարկին գործադրութեանն աշխատին։ Վարդապետն, Թոփհանէլեանն, Բարակեան, Զթճեան և այլ երեւելիք տեղւոյն ի մի վայր կուգան, պատրաստութիւն կը կատարեն, ծրագիր կուրուագծեն, ընդհանուր ժողով կը կոչեն, և վերջապէս կը վրիպին գործադրութեան ըսկսելէ։ Արգելք եղող պարագայ մի նոյն ընդհանուր ժողովոյ նախորդ օրն հրատարակուած մէկ յօդուած մի կը լինի, յորում կ'ըսուի թէ Ուստերի Հայեր յեղափոխական մեծ պատրաստութիւններ կ'ընեն ընդդէմ Թուրքիոյ։ Հայր Սարաճեան ժողովին մէջ կը կարդայ անգլիերէն յօդուածին թարգմանութիւնն և կը ցուցնէ ժողովրդեան այն ամեն վտանգներն որք կը սպառնեն Ուստերէն Տաճկաստան վերադարձող Հայերու, և թէ ո՞րքան զգուշաւոր պէտք է լինին այնպիսի զրոյցներու և հրատարակութեանց տեղի չտալու համար, և ինքն ժողովէն կը հեռանայ։ Այսպէս ժողովրդեան առջեւ իբրեւ անխոհեմ կը ներկայացուի համահայկական ժողով ընելու միտքն՝ և առաջարկն կը լքուի։

Այդ դէպքի յաջորդ կիրակին, կարգադրութեամբ Հ. Սարաճեանի, յետ աւարտման կրօնական պաշտամանն, ժողովուրդն նիստ կը յօրինէ եկեղեցւոյն մէջ և ինչ ինչ առաջարկութիւններ կը քուէարկէ։ Առ դուրս կը կենան պահապանք և թոյլ չեն տար որ ոևէ բողոքական ներս մտնէ։ Մէկ երկու ազատախօս երիտասարդներ ալ ապտակուելով դուրս կը հանուի եկեղեցիէն՝ իբրև բողոքականամիտ։ Այդ նստի մէջ վարդարդապետ Սարաճեան կը բացատրէ ըստ սովորութեան թէ հայութիւնն հայ եկեղեցւոյ մէջ և հայ եկեղեցւով կը լինի, և թէ բողոքականք պէտք է հայ ազգային գործոց չխառնուին. Ուստի և «Կաճառի»կանոնագրութեան վերայ յօդուած մի կը յաւելուն թէ բողոքականք բնաւ ոևէ պաշտօնի չպիտի կրնան կոչուիլ «Կաճառին» մէջ։ Եւ թէպէտ ընկերութեան պաշտօնէից շրջանն դեռ աւարտած չէ, դայնս պաշտօնանկ կը նկատեն և նոր պաշտօնեաներ կ'ընտրեն խկոյն։ Վարդապետն կ'ընտրուի նախագահ և Թոփհանէլեան՝ ատենապետ։ Այդ նիստն ցերեկեայ ողովորական նստին փոխանակ կը լինի, և այդ որոշմանց զօրութեամբ երեկոյի մեծ նիստերն կը խափանուին և ցերեկուանն կը բռնէ երեկոյանին տեղն։

Ցիրաւի նոյն կիրակի երեկոյին՝ ժողովասրահին մէջ կը ծանուցանէ վարդապետ Սարաճեան թէ Թոփհանէլեան իրենց ատենապետն է, և սա փքոցուռոյց պանծանօք կը սկսի իւր պաշտօն։

Այս դարձուածքն կը վիրաւորէ զբողոքականն և աւելի ևս ընկերութեան այն բոլոր անդամներն որք փոքր ի շատէ հասկացող և ազատամիտ են։ Դիգոհներու բազմութիւնն յետ խորհրդակցութեան, կ'որոշէ չընդունիլ կատարուած անկարգութիւնն, և եկեղեցւոյ ժողովասրահէն դուրս շարունակել իւր հաւաքումներ ըստ առաջնուն։ Հայր Սարաճեանի վարդա«պետական» հարուածն այսպէս յերկուս կը ճեղքէ Ուսթերի Հայերն, և մեծամասնութիւնն կը քաշուի կ'երթայ ի Կրէնճ Հօլ։

Վարդապետն ի հարկէ կը զայրանայ իւր ժողովրդեան մեծ մասին ապստամբութեան դէմ, Պ. Թոփհանէլեան գգացակից նմա, կը սկսի վրէժ լուծել, ամբաստանելով առ թրքական հիւպատոսն ի Պոսթըն թէ Ուստերի Հայոց մէջ յեղափոխական յուզում կայ օսմանեան պետութեան դէմ։ Թոփհանէլեանի յարաբերութիւնքն այդ հիւպատոսի և Ուօշինկթընի օսմանեան դեսպանին հետ կը յայտնուին, և Ուստերի Հայեր, մեծ ժողովոյ մէջ — որ տեղի չունենար Կրէնճ Հօլի մէջ և ոչ Կրէնճ Հօլի ժողովոյ պաշտօնէից առաջնորդութեամբ— կը բողոքեն այդ ամբաստանութեանց դէմ գրով առ հիւպատոսն։ Մեծապէս կը յուզուին բոլորք Թոփհանէլեանի դէմ և սա, եկեղեցւոյ ժողովասրահին մէջ, ընդ հովանեաւ առաջնորդ Սարաճեանի, կը ջատագովէ և կը ջանայ արդարացունել իւր ընթացք։ Բայց և ոչ վարդապետին կողմն յարեալ փոքրամասնութեան ամբողջն գոհ կը լինի այդ բացատրութիւններէ, և այս ու այն առանձին խորհուրդ կուտան առաջնորդ Հօր որ զԹոփհանէլեան հրաժարեցունէ ատենապետութենէ։ Տեսնելով թէ իրենց խորհուրդ անպտուղ կը մնայ, կը մտածեն յատենի ժողովոյ բողոքել և դուրս հանել զԹոֆհանէլեան։ Սա, լսելով բարկացելոց մտադրութիւնն, այլ ևս չերթար ի ժողով։ Վերջապէս կը լսուի թէ հրաժարական պիտի մատուցանէ առաջնորդին։ Ոմն ի ժողովի խօսք կ'առնու և կը սկսի խնդրել որ, ի գոհացումն յուզեալ մասին, ոչ թէ սպասուի որ Թոփանէլեան հրաժարի պատուաւորապէս, այլ պաշտօնանկ հռչակուի։ Ատենախօսն երբ Թոփանէլեանի անունն կուտայ, իսկոյն վարդապետն կը կռանէ մարմարն և լռել կը հրամայէ։ ո՛մանք կաղաղակեն որ թոյլ տրուի ատենախօսին աւարտել խօսքն, այլք լռութիւն կը պահանջեն, և ոմանք բռնի կ'ուզեն զատենախօսն տեղն նստեցունել, և ապա, հրամանաւ առաջնորդին, դրւոս հանել զինքն։ Կը սկսի կռիւը, այն սոսկալի կռիւն որ ժամ մի կը տեւէ, սթոռք կը ջախին և գլուխներ ու քթեր կը վիրաւորին, և վերջապէս ոստիկանաց միջամտութեամբ մարտին վախճան կը տրուի։

Կը վախցուէր թէ յաջորդ կիրակին, Ապրիլ 2, մեծագոյն և՛ս կռիւ տեղի պիտի ունենար։ Սարաճեան յօգնութիւն կը կոչէ ուրեմն Նիւ Եորքի Հայերէն երկուքն, և ուրիշ երեք հոգի ալ ինքնին կ'երթան օգնել խաղաղութիւնն վերահաստատելու։

Վարդապետին հետ խորհրդակցելէ յետոյ, հաշտարար հիւրերն կ'երթան ի ժողով որ տեղի կ'ունենայ բուն եկեղեցւոյն մէջ։ Ոստիկանապետ և ոստիկանք, յատուկ հրաւիրեալ, ներկայ կը գտնուին ժողովոյն խաղաղութեանն հսկելու համար։ Հրաւիրեալ հիւրերէն մին, պարզ հրաւիրմամբ Սարաճեանի, ժողովոյն կ'ատենապետէ, և պահ մի յետոյ, ժողովականաց մին փափկութեամբ դիտել կուտայ թէ այդ չէ ատենապետ կարգելու եղանակն, և հարկ կը լինի ժողովոյն քուէն առնուլ։ Առաջին խնդիրն զոր առաջնորդն կը բաղձայ եղեր որ ժողովուրդն որոշէ, այն է թէ ինքն բռնաւոր կամ տեսփոթական կերպիւ վարո՞ւած է իրենց հետ, որպէս «Թելեկրամ» թերթն կ'ըսէ։ Կ'ուզեն որ ձեռնարարձ քուէիւ այդ որոշուի իսկոյն։ ոակայն հիւրերու մէկուն դիտողութեամբ վայրիկ մի ժամանակ կը տրուի որ ժողովրդեան մէջէն այդ մասին խօսի ով որ ունի խօսելիք։ Մի քանիք կը համարձակին փափուկ դիտողութիւններ ընել, վարդապետին յոյժ անախորժ։ Քուէի կը դրուի յետոյ, և ոչ սակաւ ձեռքեր վեր կը վերնան։

Ապա կը սկսին ուրիշ խնդրոց քննութիւնք։ Նկատելով կնճիռներն, կ'առաջարկուի որ յերկուց կողմանց հինգ հինգ

հոգիք ի մի մասնաժողով տեսակցին հիւրերուն հետ և սոքա ամեն ինչ լսելէ յետոյ բերեն իրենց դիտողութիւններ և որոշում երեկոյի ժողովոյն։ Այս առաջարկ թէև դժուարութեանց կը բախի, կ'ընդունուի վերջապէս։

Զմոռնանք յիշել այն կարեւոր կետ թէ այդ ժողովոյ մասնակցելու չեն ընդունուած կաճառին բողոքական անդամք. դուռն պահապանք կեցած են նոցա մուտքն արգիլելու։

Հիւրերն, երկուց կողմանց ներկայացուցչաց հետ երկարօրէն տեսնուելէ յետոյ, կ'որոշեն որ

(1) Թոփհանէլեան ատենապետութենէ հրաժարեալ հռչակուի։

(2) Կաճառի կանոնագրութեան վերայ աւելցած այն յօդուած որ բողոքական անդամոց պաշտօնավարութիւնն կ'արգելու, ջնջուի։

(3) Կաճառի ժողովներն առ ժամանակ մի դադարին, որպէս զի կրքերն պաղին։

Հիւրերու երկուքին պաշտօն կը յանձնուի երթալ երեկոյին ծանուցանել զայս Կրէնճ Հօլի ժողովոյն և եթէ ընդունին, ամենն գան եկեղեցւոյ ժողովասրահն։ Իրօք հակաթոփանէլեանք կը հաւանին, և ամենն սիահամուռ կուգան յեկեղեցի։ Այլ աւա՜ղ, եկեղեցւոյ մէջ ժողովեալք նոյնքան յօժար չեն գտնուիր վերի պայմաններն ընդունելու, և վարդապետին նախ պատ ի պատ դիտողութիւններն և ապա կողմնակի յորդորներն քաջալերութիւն կը հայթայթեն յամառելոց։ Հիւրերէն ոմն կամ ոմանք կը զայրանան, և հրապարակաւ դժգոհութիւն յայտնելէ և առանձին ալ յանդիմանութիւններ տեղալէ յետոյ ի գլուխ այնորիկ որ արժանի էր աւելիին քան յանդիմանութեանց, կը մեկնին դըժգոհ։

Հարկ է ըսել թէ հիւրերն, եկեղեցւոյ մէջ ժողովեալ բաժինն ի հաւանութիւն դիւրաւ ածելու խորհրդով, լռութեամբ անցած են երկրորդ պայմանին վերայէն, չծանուցանելով թէ բողոքական Հայեր ևս պէտք է կարենան պաշտօն վարել. ի վերայ այսր ամենայնի, գոհացուցիչ որոշման չկրնար յանգիլ ժողովն, և ոստիկանք ալ ի վերջկոյս նստին բաւական կը զբաղին կռուի սկզբնաւորութիւններ խղդելու։

Այսպէս կը ցրուին բոլորք, և Կրէնճ Հօլի ժողովն ցայսօր կը շարունակէ։

Շարունակելի

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

ԹՇՈՒԱՌ ՎԻՃԱԿՆ

Այս անդամ 3—4 օր անցունելով Ուստերի և Ֆիլատելֆիայի Հայոց մէջ՝ «Հայք»ի խմբագիրն բազում ճշգրիտ տեղեկութիւններ հաւաքեց Ամերիկայի Հայ Գաղթականութեանց մասին։

Ամերիկայի Հայոց վիճակն մխիթարական կողմ մ'ունի, ունի նաև անմխիթարական կողմ մի կամ կողմեր։ Մխիթարական է տեսնել թէ (3-4000) հայ պանդուխտներ, Մեծ մասամբ Տաճկաստանի ներքին գաւառներէն—Խարբերդու դաշտէն, Տիգրանակերտէն, Բալուէն, Մալաթիայէն ևն—եկած, կ'աշխատին և տարուէ տարի իբր 40 հազար լիրայի գումարով մի, իբրև բաժակ մի ջրով, կը զովացուցնեն իրենց հայրենեաց պապակած շրթունքն։ Խօսքն այժմ մեր գործաւորաց բազմութեան վերայ է, և ոչ այն 40—50 ուսանողաց, 40—50 առեւտրականաց և 40—50 երկրագործ ընտանեաց վերայ։

Հաշուենք վայրկեան մի թէ մեր իբր 4,000 գործաւորք ինչ զոհողութեանց գընով ձեռք կը բերեն այն 40—50 հազար լիրայի գումարն զոր հայրենիք կը յղեն և այն նուազ նշանաւոր գումարն ալ զոր կը պահպանեն իրենց քով։

Հարկ չկայ կրկնելու աստ ինչ որ շատ անգամ յիշուած է արդէն՝ թէ գործաւորաց մէջ մեր գործաւորք ընդհանրապէս ծանր և յոգնեցուցիչ աշխատանաց կը մատնուին։ Բազում մատեր կտրած, ոչ սակաւ ոտքեր ու թեւեր ջախջախուած են մաքենաներու տակ։ Տեսած եմք նաև զոմանս ի նոցանէ որք ծանր առարկաներ վեր առնելու ստիպուած՝ մէջք ցաւցուցած կամ ուրիշ խեղութեանց ենթարկուած են։

Գործարանի մէջ յայտնի է թէ օդն ապականեալ է ոչ միայն գործաւորաց բազմութեան շնչովն այլ և գանազան ուրիշ հոտերով և կազերով։ Մեր եղբարք իրենց բնակարանաց մէջ ալ մաքուր օդ չեն շնչեր, քանզի մէկ փոքր սենեակի մէջ ընդհանրապէս 3—4—5 և աւելի հոգի կը ննջէ։ Ուստերի, Ֆիլատելֆիայի, Փրովիդէնսի և այլ քաղաքաց մէջ Հայեր ամբողջ տու-

ներ վարձած են և այսպէս ամերիկացիներու հետ միևնոյն տան մէջ բնակելու դժուարութենէն ալ ազատած են։ Բայց տուն մի ուր 20—30 կամ աւելի այր մարդիկ կ'ուտեն, կը խմեն, կը ննջեն, կը լուացուին, առանց տան տիկնոջ, յայտնի է թէ ինչպէս դժուար է մաքուր պահել։ Ո՛ր տան մէջ որ փոքր ի շատէ կրթուած մէկը կայ որ իւր ազդեցութեամբ ստիպէ մաքրութեան հոգ տանելու, հոն բաղդատական մաքրութիւն կրնայ տեսնուիլ, իսկ ուր որ այդ չկայ, երբեմն աղտոտութիւնն ու գարշահոտութիւնն կը տիրեն։ Ամերիկայի լրագիրներ յաճախ նկարագրելու առիթ ունեցած են այդպիսի հայ բնակարանաց նողկալի անմաքրութիւնն և անկարգութիւն։

Բայց կինն լոկ տունն մաքուր պահելու պաշտօն չունի։ Մեր պանդուխտ Հայերու մէջ կնոջ բացակայութիւնն ուրիշ անմաքրութեանց ալ դուռ կը բանայ։ Վարմունքի և խօսակցութեան մէջ զգուշաւորութիւն, փափկութիւն չմնար երբ կին չկայ ի միջի։ Ամեն ոք ամեն բան կ'ըսէ և ամեն տեսակ նիւթի վերայ կը խօսի յայնժամ։ Արական վեհանձնութիւն ալ չես կրնար հոն տեսնել ուր այր մարդն ոչ միայն ստակ շահելու այլ և կնկան տնական պաշտօններն կատարելու ստիպուած է յաճախ։ քիչ մի խոհարարութիւն, քիչ մի կարկտուք, քիչ մի լուացք, քիչ մի աւելուածք ալ կ'ընէ։ Եւ այս ամենն ալ գոհացուցիչ կերպիւ չեն կրնար կատարուիլ թէև վարձքով ընել տան իրենցմէ մէկուն։ Տանն մէջ խեղճութիւն և անկարգութիւն, տեսակ մի ծառայական ստորին կացութիւն անխուսափելի կը դառնայ այդ պարագայից տակ։

Այս պանդուխտներէ ոմանք ամուսնացած մարդիկ են, որք ի հայրենիս թողլով իրենց կին ու զաւակներ՝ եկած են յԱմերիկա, և աւելի շատք ամուրի երիտասարդներ են՝ ամենն ալ ամուսնական հզօր հասակի մէջ։ Ոչ փափաք ունին պան դխտութեան մէջ ամուսնանալու, և ոչ ալ կրնային կին գտնել եթէ փափաքէին ամուսնանալ։ Ամերիկացի աղջիկ առնուլ արդէն խնդրէն դուրս է, հայ աղջիկ ալ չկայ։ Իրաց վիճակն այս լինելով՝ մեր պանդուխդներէ ոմանք փորձութեանց մէջ կ'իյնան և չարաղէտ ախտերէ կը բռնուին։ Դժբաղդաբար այսպիսի կործանիչ դէպքեր շատցած են ժամանակէ մ'ի վեր։ Գէշ ախտն ինչպէս և գէշ սովորութիւնն դիւրաւ կը տարածուին։ Մարդիկ կան որք խիղճ չեն ըներ իրենց ընկերներն ի չարն յորդորելու, և թեթեւամիտներ ալ կան որք դիւրամէտ են հետեւելու չար խրատի։ «Մէկը մէկուն սատանայ, մէկը մէկուն քահանայ» կ'ըսէ առածը։

Առողջութեան վտանգաբեր և կործանիչ այս մեծ պատճառին առաջնորդ կամ զուգաքայլ ընկեր մ'ալ կայ, որ է խմելն, ոգելից ըմպելեաց և գարեջրոյ սովորական գործածութիւնն։ Մեր հայրենակիցներ գարեջուրն այս երկրին մէջ ճանչեր են և կերեւի թէ շատեր բարեկամութիւն հաստատեր են այդ առ երեւոյթս ածանագին և անվնաս ըմպելիքին հետ։ Պէտք է սակայն գիտնալ թէ գարեջուրն ալ բնական և առողջարար ըմպելի մի չէ, և մեր եղբարք չեն կրնար անոր հետ բարեկամութիւն հաստատել առանց վնասուելու մինչև անգամ եթէ մաքուր և ընտիր գարեջուր լինի, ո՛ւր կը մնայ որ գարեջուր անուան տակ շատ խարդախեալ բաներ կը վաճառուին ու կը խմուին։ Տաճկաստանի օղիին կամ րախիին տեղ ալ Ամերիկայի հուիսքին գտած են, և կ'իմանամք թէ քիչուոր չեն անոնք որ այդ մահաւիթ և վատթար ըմպելիքին հետ ընտանենալ են սկսեր։

Ապրիլ 16ին, կէս գիշերէն յետոյ, 30 Հայեր Ուստերի մէջ ձերբակալուեցան իբրեւ քաղաքին հանդարտութեան խանգարիչք և դրացեաց հանգստութեան վրդովիչք։ Քաղաքին թերթերուն մէջ պատմուած է խայտառակ եղելութիւնն թէ այդ Հայեր, երկու հայաբնակ տներու մէջ կը խմէին, կ'երգէին, ու կը պարէին երբ ոստիկանք կոխեցին զիրենք։ Կ'երեւի թէ մեր հայրենակիցք իրենցմէ մէկուն անուան տարեդարձն տօնելու առթիւ այդ փորձութեան մէջ ինկած են։ Մանաւանդ երբ գլուխներն քիչ մի տաքնան, պարելու և երգելու փափաքն ալ կ'արթնայ, և ոտից ահագին դափիւնն և մանաւանդ արեւելեան թիւրքիներու և մանիներու ահագին ղղանջիւն երբ հայկական կրծքերէ արձակուին՝ բաւական սոսկում կը պատճառեն Ամերիկացւոց։ Արևելքցիք ինչպէս հասարակ խօսակցութիւնն չափազանց բարձր ձայնով կ'ընեն, նոյնպէս և երգելն։ Տաճկաստանի մէջ մանի կանչողն

ամբողջ քաղաքն կը ընու իւր ուժգին և ահագնագոչ ձայնիւ։ Ամերիկայի մէջ այդքան մեծ քանակութիւն ձայնի չպահանջուիր, այլ եղանակ կամ ճշմարիտ ներդաշնակութիւն։ Զարմանք չէ ուրեմն որ ոստիկանք, անսալով դրացեաց գանգատներուն, այս ահարկու երգիչներու խումբն ձերբակալել ուզած լինին։ Այդ ձերբակալեալ 30 Հայերու ամէն մէկն 15 տոլար տուգանք վճարելով արձակուած է։ Բայց բոլոր տուգանքն այդ 450 տոլարն չէ։ Հայ անունն ալ տուժեց։

Զատկի շաբթուն մէջ Ուսթրրի Հայերը 1225 տոլար վճարեր են եղեր միայն գարեջրոյ համար։

Ահա մեր հայ գաղթականաց տխուր կացութեան համառօտ տեղեկագրութիւնը։ Անմաքուր օդ և չարաչար աշխատանք, անկին և անխնամ կեանք, ընտանեկան և սեռական բարոյականն վտանգի մատնուած, առողջութիւնն խանգարուելու և ախտեր չատնալու վերայ, ոյժ, պատիւ և դրամ մոլութեանց տրուելու վերայ։

Ողբալի՜ վիճակ։

Առաջ ամերիկացիք կը մտածէին թէ Հայերն թէև աղտոտ և անկիրթ են, բայց ժուժկալ, պարկեշտ, բարոյապէս մաքուր են։ Այժմ սկսած են մտածել թէ Հայեր իրենց ընիկ լաւութիւններ կորուսանելով կը լինին մոլի, արբեցող, շռայլ, անառակ, ախտաւոր և միանգամայն գծուծ, աղտոտ և կոշտ։

Եթէ մեր պանդխտոց մեծերն, առաջնորդներն, խելահասներն փութով չաշխատին այս աղետաբեր ուղղութենէ ետ դարձունել զայնս, հայ գաղթականութիւնն ի կորուստ նիւթական, ի կործանումն ֆիզիքական և ի վատթարացումն բարոյական պիտի մատնուի անփրկելի կերպով։

«Հայքի» յառաջիկայ թուով վերստին պիտի խօսիմք այս նիւթի վերայ։

Ազգային

ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլիս, Ապր. 17 (առ Ամերիկայի լրագիրս։)

«Միացեալ Նահանգաց Կ. Պոլսոյ դեսպանատան քարտուղար Նիուպէրրի, որ վերադարձաւ Զկեսարիա և Մարսուան այցելելէն, ուր քննած է մահմետական հարստահարութեանց վերջին դէպքերն, կը թուի նկատել թէ Բ. Դրան իշխանութեանց ընթացքն, գէթ ըստ մասին արդարանալի է։ Փակցուած յայտարարութիւնք, որոնցմէ ծագում առեր է յուզմունքն, ձեռագիր թրքերէն են եղեր և Սուլթանի բռնապետական լուծն թօթափելու յորդորած են զժողովուրդն, նաև ուժանակի ռումբեր դտնուեր են։ Նկատելով այս դէպքերն, որք կը ցուցնեն թէ վտանգաւոր դաւակցութիւն կար, քարտուղարն կը կարծէ թէ դաւողաց ձերբակալումն արդարանալի էր։ Եւ որովհետև 900 ձերբակալելոց մէջ անշուշտ անմեղներ կային, քարտուղարն համոզեց զմեծ վէզիրն ներում շնորհել 600ին ի նոցանէ, որք արդարեւ արձակուեցան, և մնացեալք պիտի դատուին Էնկիւրիի դատարանին առջեւ։ Նիուպէրրի կ'ուրանայ ամերիկեան հիւպատոսաց նամակներուն բացումն, և միայն յապաղումն կ'ընդունի՝ թղթատարական յոռի միջոցներէն պատճառեալ։»

Վերի հեռագիրն կը գայթակղեցունէ զմեզ քարտուղարին արդարասիրութեան վերայ, զի իւր կարծիք բնաւ ողջամիտ չէ և ոչ իւր եզրակացութիւն յստակ և տրամաբանական։ Ինչո՞ւ չկրնար խկոյն տեսնել թէ օսմանեան լեզուաւ գրուած այդ յայտարարութիւններ բուն թուրք յեղափոխականաց գործն պէտք է եղած լինին և թէ, հետևապէս, 900 Հայեր այդ պատճառաւ բանտարկել պարզ անիրաւութիւն է։ Եթէ ձերբակալութիւնք Թրքաց վերայ կատարուած լինէին, յայնժամ Նիուպէրրի կրնար ըստ մասին արդարացունել կառավարութեան ընթացքն։

Խեղճ Նիուպէրրի, դու առաջին օտա-

բականն չես թուրք պաշտօնէից կեղծաւորութենէն և չողոքորթ խօսքերէն (և ընծաներէն) խաբուող։ Այդ անիծեալ երկրին մէջ մեծ տէրութեանց հզօր դեսպաններն անգամ մեծ դիւցազնութեան կարօտ են ճշմարիտն խօսելու և արդար դատելու համար։

*

* *

Կ. Պոլսէ կը հեռագրեն թէ Միացեալ Նահանգաց ներկայացուցիչն, Տաւիտ Թոմսըն, ներկայ պիտի գտնուի հայ բանտարկելոց դատաստանին յԷնկիւրիւ։

*

* *

Արաբկերի մէջ, Զատկուն աւագ շաբաթ օրն, սգալի աղէտ մի պատահած է։ Քարուկիր խանի մի մէջ՝ խումբ մի հայերու հաւկիթ զարնելով զբօսնող պահուն, յանկարծ խանն կը փլչի, և 40 Հայեր կը թաղուին փլատակաց ներքև, իսկ ութն՝ վիրաւոր դուրս կը հանուին։

Խանն եկեղեցւոյ կալուածներէն էր։

*

* *

Խարբերդու կողմէն լուր կը հասնի մեզ թէ ցորենն շատ սղեր է այն կողմերն մէկ չարեկն 95—100 դահեկանի կը վաճառուի։ Հացագործք մէկ քաշ հացն 48 փարայ, ծախել սկսեր են, և կառավարութիւնն 44 փարայի իջեցունել տուեր է։ ասոր վերայ հացագործք փակեր են իրենց խանութներ։ Կառավարութիւնն որոշեր է ինքն բանալ 3 խանութ և հաց հանել 42 փարայի։

*

* *

Պուլկարիոյ Ռուսճուք քաղաքէն կը գրէ մեզ թղթակից մի 12 Մարտ թուականաւ։

Ամսոյս 29ին տեղւոյս երիտ. ընթերց. ընկերութեան կողմէ, ի նպաստ Ս. Մեսրոպեան վարժարանի, Ցունաց Նորակառոյց թատրոնին մէջ տրուեցաւ «Անիի կործանումն» անուն ներկայացումն վեց արարուածով։

Սրահը ճոխապէս զարդարուած էր երփներանգ դրօշներով, և բազմատեսակ պատկերներով։ Բեմի ճակատն ի տես դրուած էին Ֆէրտինանտ իշխանի և նախարարապետ Պ. Ստամպուլովի լուսանկար պատկերներն, որք զարդարուած էին գոյն զգոյն ծաղիկներով և կանանչեղէններով։

Հանդիսականաց աչքերն գրաւող ամենէն շատն վարագոյրն էր. որոյ վերայ նշանակք Հայաստանեայց նկարուած էր զանազան գոյներով. որ սրահին մեծ փայլ մի կ'ընծայէր։

Երգեցիկ խումբն նուագածուներու ընկերակցութեամբ միշտ մէկ կողմէ իւր քաղցրանուագ քայլերգներով ներկայից սրտերն կը հրճուեցնէր։

Սրահը լի էր հոծ բազմութեամբ, երբ առաջին տեսարանը կը բացուի, բեմի վրայ ի տես կային Գագիկ և իւր գօրականք, Հայկական դեղեցկաշուք հագուստներով, որք ցոյց կուտային անկեալ Հայուն փառաւոր անցեալը, և ի վերջ սոյն տեսարանի բեմն լուսավառուեցաւ պենկալեան հրով։

Դերասանք իրենց դերեր խիստ լաւ կատարեցին յստակ առոգտնութեամբ, և ընդ միշտ երկայն ծափահարութիւններով ընդ միջուեցան։ Սրտաչարժ տեսարան մի կը ներկայանար մարդուս աչքին երբ բեմի վերայ ելնէր Օր. Հրանոյշ Սարգիսեան, որ իւր գրաւիչ շարժմամբն, լուրջ և ազդու ձայնով, հանդիսականաց սրտերուն ներգործելով, կը ցնցէր և կ'արթնցնէր հայրենասիրական զգացումն։

*

* *

1893 թուականիս առաջին երեք ամսոց համար կատարուած վիճակագրութենէն կը տեսնուի թէ օտար երկիրներէ ի Միացեալ Նահանգս գաղթողներու թիւն նուազած է բաղդատմամբ անցեալ տարուան։ 1892ին առաջին 3 ամսոց մէջ 98 հազար, այս տարի 70 հազար հոգի եկած է։ Ամերիկայի թերթերն ուրախութեամբ կը նշանակեն թէ նուազող գաղթականու թիւնն այն երկիրներէն կուգայ որ քանի զամենայն նուազ բաղձալի տարրեր կը բերէ յայս երկիր, օրինակի համար ի Ռու-

սիոյ 3,663 եկած է փոխան 15,509ի, նոյնպէս ի Հունգարիոյ և ի Բոլոնիոյ։

Թէպէտ գաղթականութեան դէմ շատ աղմուկ բարձին ոմանք անցեալ տարի, բայց վերջին բառլամէնթին օրէնսդրութեան վերայ շատ տպաւորութիւն չկրցան գործել և այժմ առաջուան չափ աղաղակող չկայ։ Ցայտնի եղաւ թէ այս երկրին արեւմտեան նահանգաց ներկայացուցիչք արեւելեաններուն պէս չեն համակրիր գաղթականութեան դէմ խիստ միջոցներ գործածելու, և այս ալ դիւրահասկանալի է, ըստ որում արեւմտեայք կ'ուզեն որ իրենց կողմերն ալ չէննան ու բազմամարդ լինին, մինչդեռ արեւելեայք կը նեղուին չափազանց բազմութեան և չափազանց մրցակցութեան երեսէն։

Արդէն գաղթականութեան հակառակողներն ալ մեղմացան տեսնելով թէ յիտալիոյ, ի Հունգարիոյ, ի Բոլոնիոյ և ի Ռուսիոյ այսր հասնող անբաղձալի տարրերն նուազելու միտած են։ Արդէն ոչ երբէք հակառակած ունին Անգլիացի, Ուէլշ, Սկովտիացի, Ֆռանսացի, Գերմանացի, Տատանիմարդացի, Նորվեկիացի և Շուէտ գաղթականութեանց։

*

* *

Ի ԹՐՈՑ

Տ. Տ. անուն Հայն ամբաստանեց զՏ. իւր հայրենակից, թէ 800 թալէր գողցած է իւր վերարկուի ծոցէն։ Ամբաստանեալն բանտարկուեցաւ, բայց յետ հարցաքննութեան անպարտ ճանաչուելով՝ արձակուեցաւ։

*

* *

Հայ ընթացաւարտներ.—

Տիար Փէլթէքեան Պալթիմորի բժշկական վարժարանին և Արամ Հէճինեան Շիքակոյի Ռըշ բժշկական վարժարանին մէջ ընթացք աւարտած և տոքթորութեան վկայական ընդունած են գարունս։

Նոյնպէս Տիար Կ. Մանավեան իւր աստուածաբանական ուսմանց ընթացքն աւարտեց Շիքակոյի աստուածաբանական վարժարանին մէջ։

*
* *

Ճէյմս Բոլինս անուն Իռլանտացի գործաւոր մի թելի գործանոցին մէջ հայ գործաւորի մի ճակտին վերք մի առած լինելու յանցանօք ձերբակալուած և վեցամսեայ բանտարկութեան դատապարտուած է։

*

* *

— Շնորհակալութեամբ ընդունեցանք Արժ. Հ. Բ. Սարգիսեանի «ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄԱՆԻՒԷԼ-ՊԱՒՂԻԿԵԱՆ ԹՈՆԴՐԱԿԻՑՆԵՐՈՒ ԱՂԱՆԴԻՆ ԵՒ ԳՐՆԱՐԵԿԱՑԻՈՑ ԹՈՒՂԹԸ,» 117 երեսէ բաղկացեալ, տպեալ ի Վենետիկ 1893։

— Շնորհակալութեամբ ընդունեցանք նաև «Հայ Վենետ»ի Իտալերէն թարգմանութիւնն, ի նմին Միաբանութենէ ի լոյս ընծայեալ։

*

* *

Տր. Մ. Ս. Գաբրիէլեան, խմբագիր «Հայք»ի, հրաւիրեալ է «Երիտասարդաց առողջաբանութեան վերայ» բանախօսել Նիւ Եորքի Եր. Բր. Ընկ. Ֆռանսական ճիւղին առջեւ, ի 13 Մայիսի, երեկոյեան ժամ 8ին, ի թիւ 114 Ուէսթ 21դ Փողոց։ Ֆռանսերէն հասկացող հայ երիտասարդք կը հրաւիրուին ներկայ լինիլ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութիւնց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն։

Մէկ օրինակի գինն է 20 սենթ կամ մէկ ֆրանք —կանխիկ վճարելի։

Յակոբ Էքիզեան Կարապետ Էքիզեան
348 Fountain Street 28 South Margin Street
Providence R. I. U. S. Boston, Mass

ԵՂԲԱՐՔ Յ. ԷՔԻԶԵԱՆ

Յովհաննէս Էքիզեան Գէորք Էքիզեան

Էքիզեան եղբարց թէ Միացեալ Նահանգաց և թէ Կ. Պոլսոյ կամ Խարբերդու տուներու շահերն միևնոյն տան վերաբերելուն, մանաւանդ Միացեալ Նահանգաց դրամատանց միոյն հետ համաձայնութիւն մի գոյացուցած ըլլալով Եւրոպիոյ կողմերը ստակի փոխադրութեան գներուն բաւական տարբերութիւն մը ձեռք բերած ըլլալով, կը համարձակին ըսելու թէ ամենէն վար գներով ստակի փոխադրութիւններ պիտի ընեն Եւրոպայի կամ Թուրքիոյ կողմերն։ Անոնք որ կը կարօտին ստակ դրկել դէպի Եւրոպա կամ Կ. Պոլիս, Ատանա, Տիգրանակերտ Խարբերդ, Մալաթիա, Բալու, Ակն, Արաբկեր, Զիմիշկէզէկ, Զունքուշ, ընդհանուր շրջականերովն, պէտք է ուղղակի գրեն յիշեալ տանց հասցէներուն, որով իրենց փափաքանաց համեմատ պիտի ստանան անմիջապէս իրենց փոխանակագրերն ամենէն գոհացուցիչ կերպով, և փոխարէնը պիտի գանձուին առանց դժուարութեան և առանց որ և է ծախքի մի հարկ ունենալու։

C. F. RANDALL

177 Front ST. Worcester, Mass.

Պատիւ ունիմ ծանուցանել Ուսթերի արգոյ հայ հասարակութեան թէ իմ վերոյիշեալ խանութին մէջ կօշիկներ և ըսպըրներ կը վաճառեմ այնպիսի գներով և այնպիսի կերպով որ անշուշտ հաճելի կը լինի իմ հայ հաճախորդաց։

Ծանուցանելով ևս թէ բացարձակապէս և ՄԻԱՅՆ ՄԷԿ ԳԻՆ ունիմ, կը սպասեմ ձեր հրամանաց և կը մնամ յարգանօք

Ձերդ
Բանտալ

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ։

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան։ բազում ձևերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէր կամ 5 ֆրանք։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան։ Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

«ՀԱՅՐ»
Թղթակազմ

Ա. տարի 1տոլար 50 սէնթ կամ 7ֆր. 50ս.
Բ. տարի 2տոլար կամ 10 ֆրանք

T. LACHANCE,

60 Front Street
WORCESTER MASS.

ԱՄԵՆԸՆՏԻՐ ԿՕՇԻԿՆԵՐ

ՄԷԿ ԳԻՆ ՄԻԱՅՆ

PATENTS HOPKINS & ATKINS washington, D. C. 20 years' experience write for informatian

RECULATE THE
STOMACH, LIVER AND BOWELS,
AND
PURIFY THE BLOOD.
A RELIABLE REMEDY FOR
Indigestion, Biliousness, Headache, Constipation, Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad Complexion, Dysentery, Offensive Breath, and all disorders of the Stomach, Liver and Bowels.
Ripans Tabules contain nothing injurious to the most delicate constitution. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief.
Sold by druggists. A trial bottle sent by mail on receipt of 15 cents. Address
THE RIPANS CHEMICAL CO.
10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tabules are of great value.

Ripans Tabules cure headache.

Ripans Tabules cure constipation.

Ripans Tabules : for sour stomach.

Ripans Tabules : for liver troubles.

Ripans Tabules : a family remedy.

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվինիու Նիւ Եորք
26դ և 27դ Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԳԵՂԱԳՈՐԾ

(Հաստատեալ ի 1849)

56 Front St. Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

NATIONAL MUTUAL
INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

ԱՕԳՈՒՅԻՆ ՓՈԽԱԴԱՐՁ
ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ինչ ըսել է, գիտէք, Հայեր:

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք:

Մարդ մի, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէր, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդք կ'ընդունին հազար թալէր, եթէ պայմանն հազար թալէրի է, կամ մինչև հինգ հազար թալէր, ըստ պայմանին:

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանագրեալ հազար կամ աւելի թալէրն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինի:

Այս մասին հետաքրքիր եղողներու «Հայք»ի խմբագիրն կրնայ աւելի տեղեկութիւն տալ

NORBERT FRANCK

ԴԵՂԱԳՈՐԾ

311 7դ Էվինիու Նիւ Եորք
27դ և 28դ Փողոցներու միջև

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ